

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն հատորը շարադրվել է 2016-2020 թվականներին՝ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում, բայց նման մի աշխատանքի գաղափարն իրականում հղացվել է ավելի վաղ՝ 2012-2015 թվականներին, երբ գրվել է իմ թեկնածուական ատենախոսությունը՝ «Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիրիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական ֆննդություն)» թեմայով: Ատենախոսությունը պաշտպանվել է 2015 թ. ՀՀ ԳԱԱ արևելագիտություն ինստիտուտում: Հիմնական արդյունքները խտացվել են եզրակացություններում, որոնցից մեկում արձանագրվել է. «Այնուամենայնիվ, 1260-1270 թթ. հայ-մամլուֆյան հարաբերությունների վերաբերյալ արաբագիր մատենագիրների հայտնած տեղեկությունների համեմատական և զուգադիր ֆննդությունը ցույց է տալիս, որ գոնե Բայբարսի կառավարման ժամանակաշրջանի համար ալ-Մակրիզիի համար անմիջականորեն թե միջնորդաբար (խոսքը մասնավորապես Իբն ալ-Ֆուրաքի Tārīḥ al-duwal wa-l-mulūk-ի մասին է) աղբյուր է ծառայել Բայբարս ալ-Բունդուկդարիի կենսագիր Իբն Աբդ ալ-Ջահիրի Al-Rawḍ al-zāhir երկը»:

Հատկանշական է, որ ալ-Մակրիզին ժե դարի պատմիչ է՝ մամլուֆյան պատմագրություն կոչվող ավանդույթի խոշորագույն դեմքերից մեկը: Վերջինս իր պատմագրական աշխատությունները գրելիս բազմաթիվ աղբյուրներ է ունեցել ձեռքի տակ, թեև հաճախ «անբարեխղճորեն» թաքցրել է դրանք՝ հարկ չհամարելով հիշատակել: Կարող է հարց ծագել, որ եթե աշխատանքի ժամանակագրական սահմանները տեղավորվել են 1260-1310 թվականների միջակայքում, ինչու՞ է այդ հետազոտություն համար առաջնային աղբյուր վերցվել ուշ շրջանի հեղինակի գործ: Սա այն ժամանակ նույնպես պարզաբանել ենք.

«Ճիշտ է՝ ալ-Մակրիզին ուշ շրջանի հեղինակ է, բայց նրանից առաջ ապրած ոչ մի արաբագիր պատմիչի երկում Կիլիկիայի պատմությունն այնքան ընդհանրական տեսքով չի արտացոլվել, որքան նրա *Kitāb al-sulūk*-ում: Հետևաբար, Կիլիկյան Հայաստանին վերաբերող որքան հնարավոր է ավելի շատ հաղորդումների անդրադառնալու համար մեզ անհրաժեշտ է եղել հենց ուշ շրջանի աղբյուր, և մեր ընտրությունը կանգ է առել հենց ալ-Մակրիզիի վրա՝ որպես Կիլիկյան Հայաստանի մասին քերես ամենաշատ վկայություններ պահպանած հեղինակի: Բացի այդ, ուշ շրջանի աղբյուր վերցնելը մեզ հնարավորություն է տվել տեսնել պատմական գիտելիքի զարգացման «էվոլյուցիան»՝ մինևույն վկայությունը փոխառած տարբեր մատենագիրների հաղորդումների համեմատական փնտյամբ»։ *Հետևաբար, ալ-Մակրիզիի երկը մեզ մեծապես օգնել է՝ հասկանալու Իբն Աբդ ալ-Ջահիբի պատմագրական ժառանգության անգնահատելի նշանակությունը Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Կասկած չկա, որ վերջինիս երկերը Հայ-մամլուքյան 1260-1290-ական թվականներն ընդգրկող ժամանանակաշրջանի քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների մասին հաղորդող կարևորագույն և առաջնային աղբյուրներն են: Մամլուքյան հարուստ պատմագրական ավանդույթի մյուս բոլոր հուշարձանները սույն աշխատանքում դիտարկված են Իբն Աբդ ալ-Ջահիբի երկերին զուգահեռ՝ դրանց հաղորդած տեղեկությունները ճշտելու և լրացնելու նպատակով:*

Սույն հետազոտությունը համարում ենք մեր ատենախոսության թեմայի վերամշակումն ու լրամշակումը, չնայած որ այս ուսումնասիրության մեջ շեշտադրումը կատարված է բոլորովին այլ հեղինակի և նրա մատենագրական ժառանգության վրա:

Ատենախոսության և այս աշխատանքի կայացման գործում իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել բազմաթիվ գիտնականներ և պարզապես մտահոգ մարդիկ՝ ոմանք իրենց ղեկավարություններով, մասնագիտական խորհուրդներով, ոմանք էլ պարզապես արտերկրի գրադարաններից անհրաժեշտ մասնագիտական գրականության ձեռքբերման հարցում ցուցաբերած սիրալիր օժանդակությամբ: Երախտագիտության ամենամեծ խոսքերն անշուշտ ուղղված են պ.գ.դ. Ազատ Բողոյանին, ով 2012-2015 թվականներին ղեկավարել է վերո-

Հիշյալ ատենախոսությունը կատարումը: Նրա խորհուրդները, անգնահատելի դիտողություններն անփոխարինելի նշանակություն են ունեցել ինձ համար՝ ուղղորդելով բարդագույն խնդիրների համար լուծումներ որոնելիս: Նրա հետ շփումը, նրա մշտական ուշադրությունն աշխատանքի ընթացքի նկատմամբ, նորանոր հանձնարարությունների առաջադրմամբ հետագա անելիքներիս ուղղորդումը գործը հաջողությունամբ ավարտելու վստահություն ու կորով են տվել ինձ:

Շնորհակալության խոսքեր եմ ուղղում նաև արտերկրի մի շարք գիտնականների, որոնց տարբեր առիթներով դիմել եմ՝ առանձին սկզբնաղբյուրների օգտագործման վերաբերյալ մասնագիտական խորհուրդներ ստանալու, ոմանց էլ՝ ինձ անհասանելի գիտական գրականություն ձեռքբերման հարցում օժանդակելու խնդրանքով: Հարկ եմ համարում առանձին հիշատակել Բելգիայի Լեոփեն-լա-Նեով համալսարանի պրոֆեսոր Յոհաննես դեն Հեյերին, Կիպրոսի հետազոտական կենտրոնի պրոֆեսոր Նիկոլաս Կուռեսասին, Մեծ Բրիտանիայի Սենթ Էնդրյուսի համալսարանի պրոֆեսոր Էնդրյու Փիքոքին, Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր Ռուստամ Շուքուրովին, Բեռլինի պետական գրադարանի՝ Աֆրիկայի, ժամանակակից Թուրքիայի, հայագիտության և եթովպագիտության բաժնի վարիչ Մելինե Փեհլիվանյանին, Երուսաղեմի եբրայական համալսարանի պրոֆեսոր Ռ. Ամիտային, Օքսֆորդի համալսարանի «Խալիլի հետազոտական կենտրոնի» գիտաշխատող Կայլա Ջեքսոնին, Մասսաչուսեթսի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Էնն Բրոդբերիջին, Լիեթի (Բելգիա) համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Բոդենին, Նոտր-Դամի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Լի Գուոյին:

Նրախտագիտության ամենաջերմ խոսքերն ուղղում եմ մորս և կնոջս, որոնց քաջալերանքը որոշիչ նշանակություն է ունեցել այս աշխատությունը լրման հասցնելիս: